# Ալեքսանդր Ծատուրյան

## Զինվորի երգ

Թրռի՛ր Իմ նժույգ, սրլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի կռվի փոթորիկ,
Կրռվի մեջ միայն ես արյան գրնով
Կրփրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք:

Տա՛ր ինձ այն աշխարհ - անցյալում հրզոր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի.
Ուր, ավա՜ղ, դժբախտ եղբայրս այսօր
Յուր կյանքն է ողբում՝ օտարին գերի...

Անցան շա՜տ դարեր, անցան շա՜տ տարիք,
Ազգս շատ ապրեց քաղցրիկ հույսերով,
Բայց նորան երբեք չրժպտաց երկինք,
Չրտեսավ նա կյանք խաղաղ, անվրդով:

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բախտին,
Երկա՜ր սպասեց նա կյանքի գարնան,
Բայց նորա առջև ոսոխ թշնամին
Յուր սրով փորեց կյանքի գերեզման...

Դե՛հ, թռի՛ր, նժո՛ւյգ. սրլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտումն է զինվորն յուր արյան գնով

Ազգին պարգևում հաղթության դափնիք: